ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435 136,
էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

#
19.10.2016թ.
303-ի 3

Կապանի ԼՀԿ ՓԲԸ-ի տնօրեն
պարոն Դմիտրի Ուշկովին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ուշկով,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ աշխատակից ունի կոմբինատը:
2. Քանի՞ աշխատակից է աշխատանքից ազատվել 2015թ.-ի հունվարի 1-ից մինչև 2016թ.-ի հոկտմբերը:
3. Ի՞նչ մասնագիտությունների մասով է պակաս և ավելցուկ նկատվում կոմբինատում:
4. Նախկին աշխատավարձերի պարտքերի քանի՞ տոկոսն է մարված:
5. Ի՞նչ սոցիալական փաթեթներ են մշակվում Կապան քաղաքում իրականացնելու համար:
6. Աշխատանքային խեղում ստացածների համար ի՞նչ փաթեթներ կան:
7. Բնապահպանական ի՞նչ միջոցառումներ/ծրագրեր են իրականացվում:
8. 2004-ից շահագործվող պոչամբարում 2016-ի տվյալներով տարեկան կտրվածքով ի՞նչ քանակությամբ և վտանգավորության դասի թափոններ են առաջացել:
9. Ամսական կտրվածքով որքա՞ն հանքաքար է արտահանվում:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան